



Web: [www.aarhus.am](http://www.aarhus.am) ,

E-mail: [blejanli@gmail.com](mailto:blejanli@gmail.com)

Mob: 077 76 46 41 , 093 99 12 12

[aarhusnews@gmail.com](mailto:aarhusnews@gmail.com)

N AA-004

18 օգոստոսի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարար  
պարոն Գագիկ Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ս.թ. հուլիսի 31-ին մեր ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարությունում անցկացված ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի ներքո ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները հաստատելու մասին» որոշման նախագծի հասարակական լսմանը:

Քննարկման ընթացքում մեր կողմից կարևորվեց ներկայացված նախագծի հավելվածի 4-րդ կետի աղյուսակի 6-րդ` «Ֆինանսներ» հատվածի առաջին ենթակետով նախատեսված կլիմայական քաղաքացիական շրջանառու հիմնադրամ ստեղծելու առաջարկը, որի համալրման աղբյուրներից է նաև բնօգտագործման և բնապահպանական վճարներից կատարվող մասնահանումները: Քննարկման ընթացքում տեղեկացանք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը ոչ նպատակահարմար է համարել վերոնշյալ վճարների ուղղումը դեպի հիմնադրամ: Տեղեկացանք նաև, որ արդեն 3-րդ անգամ մերժվել է նաև ՀՀ ԲՆ-ի կողմից 3-րդ անգամ կառավարության քննարկմանը ներկայացված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով նախատեսված համայնքներին հատկացվող սուբվենցիաները ավելացնելու առաջարկը:

Դեռևս 2013թ. քննարկվող հարցի վերաբերյալ մի շարք ՔՀԿ-ների տեսակետն ու հիմնավորումներն ենք ներկայացրել ՀՀ վարչապետին ու ԲՆ-ին (կից տեսեք նամակի պատճենը, կամ հղումը` <http://aarhus.am/letters/Harcim%20karavarutyun.pdf>):

Մենք, ներքո ստորագրյալներս, ՀՀ ԲՆ-ի կողմից ներկայացված վերոհիշյալ երկու նախագծերում արված առաջարկությունները՝ կապված բնօգտագործման և բնապահպանական վճարներից կատարվող մասնահանումները քաղաքացիական շրջանառու հիմնադրամին ուղղելու և ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարներից համայնքներին հատկացվող սուբվենցիաները ավելացնելու հետ, համարում ենք շատ խելամիտ և այսօրվա պայմաններում տեղին առաջարկներ, մեր վճռական անհամաձայնությունն ենք հայտնում ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշմանը և պահանջում ենք Ձեր ղեկավարած կառույցի տեսակետի և դիրքորոշման վերանայում:

Առդիր՝ 6 թերթ:

Ակնկալում ենք բարձրացված հարցի վերաբերյալ Ձեր հիմնավորումները և գրավոր պատասխանը՝ կապված մեր առաջարկի հետ:

Հարգանքով՝ Հայաստանի Օրհուս կենտրոններ

Ալավերդու Օրհուս կենտրոն

*Անուշ Էվոյան*

Ապարանի Օրհուս կենտրոն

*Նատալյա Մանուկյան*

Արարատի Օրհուս կենտրոն

*Հռիփսիմե Մարգարյան*

Գավառի Օրհուս կենտրոն

*Լիաննա Ասոյան*

*Մարինե Մազմանյան*

Գյումրու Օրհուս կենտրոն

*Գևորգ Պետրոսյան*

Դիլիջանի Օրհուս կենտրոն

*Ալբերտ Հարոյան*

Եղվարդի Օրհուս կենտրոն

*Ռուզաննա Մանյան*

*Անուշ Բեյրության*

Երևանի Օրհուս կենտրոն

Միրվա Այվազյան

Իջևանի Օրհուս կենտրոն

Դավիթ Ղազարյան

Կապանի Օրհուս կենտրոն

Աշոտ Ավագյան

Հրազդանի Օրհուս կենտրոն

Անահիտ Մնացականյան

Ժորա Առաքելյան

Ստեփանավանի Օրհուս կենտրոն

Մանյա Մելիքջանյան

Հայաստանի Օրհուս կենտրոնների տեղեկատվության  
պատասխանատու

Մարի Չաքրյան



Address: Yerevan Charents 46, tel. 093 99 12 12, E-mail- aarhusnews@gmail.com

29 Ապրիլի 2014թ.

ՀՀ վարչապետ

պարոն Ն.Արթուրյանին

Հարգելի պարոն վարչապետ

2013թ.-ի նոյեմբերի 28-ին մեր կողմից ՀՀ վարչապետին ուղղվել էր գրություն, կապված ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացրած «Հնկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթի հետ (գրության պատճեն կցվում է), որում մի շարք ՀԿ-ների ներկայացուցիչների ու փորձագետների կողմից դրական կարծիք էր հայտնվել ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռության վերաբերյալ ու տրվել առաջարկություններ այդ նախաձեռության հետագա զարգացման ուղղությամբ:

Մակայն մեր գրությունը մնաց անպատասխան:

Խնդրում ենք տեղեկացնել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացրած վերը նշված ՀՀ օրենքի նախագծի փաթեթի համաձայնեցման ընթացքի վերաբերյալ:

Առդիր՝ 2013թ.-ի նոյեմբերի 28-ի մեր գրության պատճեն, 5 թերթ:

Հարգանքով՝  Մարի Չաքրյան



E-mail [aarhusnews@gmail.com](mailto:aarhusnews@gmail.com), [info@aarhus.am](mailto:info@aarhus.am)

Հեռ. 010 551364, քզ. 093 991212

**28 նոյեմբերի 2013թ.**

ՀՀ Վարչապետ  
պարոն Տիգրան Սարգսյանին

### Նամակ

Տեղեկացնում ենք, որ ս.թ. նոյեմբերի 7-ին Երևանի Օրհուս կենտրոնում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում Հայաստանում գործող բոլոր Օրհուս կենտրոնների համակարգողների, մի շարք ՀԿ-ների ներկայացուցիչների ու փորձագետների մասնակցությամբ (ցուցակը կցվում է), որի ընթացքում ի թիվս այլ հարցերի ներկայացվել ու քննարկվել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացրած «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը: Քննարկման արդյունքում մասնակիցները եկել են համաձայնության՝ դրական գնահատել ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությունը, ըստ որի բնավճարներից համայնքներին տրամադրվող ֆինանսական հատկացումները առաջարկվում է ավելացնել:

Հատկապես կարևոր համարվեց, որ սկսած 2004թ.-ից, երբ սկիզբ դրվեց բնապահպանական վճարներից ազդակիր համայնքներին հատկացում կատարելու պրակտիկային, ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է հատկացում կատարել նաև բնօգտագործման վճարներից:

Սակայն հետաքրքիր էր ծանոթանալ նախագծի փաթեթում ընդգրկված համաձայնեցման տեղեկանքի բովանդակությանը, որից պարզվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունն ու ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն դեմ են ոչ միայն դրական նախադեպ հանդիսացող այդ առաջարկին, այլ նաև, ընդհանրապես, համայնքներին տրամադրվող բնապահպանական նպատակային գումարների ավելացմանը: Այդ գերատեսչությունների ներկայացրած «հիմնավորումները» ոչ մի կապ չունեն քննարկվող առարկայի ու գաղափարի հետ ու, բնականաբար պետք է մերժվեն:

Միաժամանակ արդարացի են ՀՀ տարածքային կառավարման նախարարության դիտողությունները, որոնց համաձայն բնօգտագործման վճարներից 1%-ի հատկացման չափաքանակը անհասկանալի է, քանի որ նախկինում առաջարկված ու իրենց հետ համաձայնեցված է եղել 5%-ի չափաքանակը:

Քննարկման մասնակիցներին հիշեցվեց, որ 2012թ.-ին ՀՀ ազգային ժողովում 2013թ.-ի պետական բյուջեի քննարկման ժամանակ ՀՀ պատգամավոր Լևոն Խաչատրյանի հարցին, թե ինչու համայնքներին չի հատկացվում հավաքագրվող բնապահպանական ու բնօգտագործման վճարներից գոյացած գումարի ամբողջ ծավալը, կառավարության ներկայացուցիչը պատասխանեց, որ հարցադրումը ճիշտ է ու ընդունելի և, որ հաջորդ տարվա բյուջեի ձևավորմանը հարցադրումը հաշվի կառնվի: Հիմա եկել է հաջորդ տարվա՝ 2014թ.-ի բյուջեի քննարկման ժամանակը: Ո՞ւր կորավ այդ հավաստումը:

Քննարկման մասնակիցները համաձայնության եկան հետևյալում.

1. Հավանություն տալ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությանը՝ ավելացնելու համայնքներին հատկացվող բնապահպանական սուբվենցիաները,
2. Օրենքի նախագիծն ընդունել, սակայն ուղղումով՝ վերը նշված 1%-ի փոխարեն ընդունել նախորդ՝ 5%-ի տարբերակը:

Սակայն այս լուծումը համարել ժամանակավոր՝ նպատակ ունենալով 100% -ին հասնել և, որ հատկացումներ կատարվեն բոլոր համայնքներին, քանզի բնական ռեսուրսները (ընդերք, մակերեսային ու ստորերկրյա ջրային ռեսուրսները, անտառ և այլն) բոլորինն են, այլ ոչ միայն ընտրված համայնքներինը,

3. Ընդունել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի առաջարկը՝ քննարկելու ու վերլուծելու համայնքների կողմից ստացվող նպատակային գումարների օգտագործման սկզբունքը, կարգն ու արդյունավետությունը՝ այն կատարելագործելու նպատակով,
4. Լայն քննարկման առարկա դարձնել այս խնդիրը հատկապես Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) գյուղական համայնքներում՝ կազմակերպելով իրազեկման ու մասնակցության գործընթաց:

Առդիր՝ մասնակիցների ցուցակը - 3էջ

Հանդիպման մասնակիցների  
հանձնարարությամբ, հարգանքով՝



Մարի Չաքրյան

Մասնակիցների գրանցման թերթիկ

Մեմբեր՝ Հայկական կարմիր խաչի կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի ու ՀԿ-ների միջև համագործակցության, հուշագրի ներկայացում և «Բնապահպանական ու բնօգտագործման վճարներից ազդակիր համայնքներին հատկացվող սուբվենցիաների ստրատեգիան ու դրանց օգտագործման կարգի կատարելագործման ուղիների քննարկում» թեմաներով

« 07 » 11 2013թ.

ք. Երևան, Չարենցի 46, Երևանի Օրինու կենտրոն

N	Ազգանուն, Անուն	Կազմակերպությունը, Պաշտոնը	Հեռախոսի N	Ի-մեյլերենտային հասցեն	Ստորագրություն
1	Մառյան Լիանա	Օրագրի ղեկավար	077 76 46 41	<a href="mailto:blejanli@gmail.com">blejanli@gmail.com</a>	<i>[Signature]</i> 07.11.2013
2	Մազմանյան Մարինե	Գավառի Օրինու կենտրոնի համակարգող	094 64 24 64	<a href="mailto:maradarkish@gmail.com">maradarkish@gmail.com</a>	<i>[Signature]</i>
3	Պետրոսյան Գևորգ	Գյումրու Օրինու կենտրոնի համակարգող	093 71 45 33	<a href="mailto:gevpetrosyan@gmail.com">gevpetrosyan@gmail.com</a>	<i>[Signature]</i>
4	Ավագյան Աշոտ	Կապանի Օրինու կենտրոնի համակարգող	093 79 59 21	<a href="mailto:kapan.aarhus@mail.ru">kapan.aarhus@mail.ru</a>	<i>[Signature]</i>
5	Պողոսյան Նվեր	Գորիսի Օրինու կենտրոնի համակարգող	094 81 50 52	<a href="mailto:nver.goris@gmail.com">nver.goris@gmail.com</a>	<i>[Signature]</i>
6	Հարոյան Ալբերտ	Դիլիջանի Օրինու կենտրոնի համակարգող	094 76 35 94	<a href="mailto:albertharoyan@rambler.ru">albertharoyan@rambler.ru</a>	<i>[Signature]</i>
7	Բոջուկյան Պերճ	Վանաձորի Օրինու կենտրոնի համակարգող	055 55 00 37	<a href="mailto:bojukyand@mail.ru">bojukyand@mail.ru</a>	<i>[Signature]</i>
8	Առաքելյան Ժորա	Հրազդանի Օրինու կենտրոնի համակարգող	091 66 33 16	<a href="mailto:zhora.arakelvani@mail.ru">zhora.arakelvani@mail.ru</a>	<i>[Signature]</i>
9	Մնացականյան Անահիտ	Հրազդանի Օրինու կենտրոնի համակարգող	093 84 30 08	<a href="mailto:manahit84@mail.ru">manahit84@mail.ru</a>	<i>[Signature]</i>
10	Մանյան Ռուզաննա	Եղվարդի Օրինու կենտրոնի համակարգող	094 33 10 55	<a href="mailto:ruzannamanyan@yandex.com">ruzannamanyan@yandex.com</a>	<i>[Signature]</i>





30	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
31	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
32	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
33	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
34	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
35	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
36	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
37	Perwakilan Jember	Perwakilan Jember	093-57-55-86 anast-mad@mad.ru	093-57-55-86 anast-mad@mad.ru
38				
39				
40				
41				
42				
43				
44				
45				
46				
47				
48				